




ԿԻՉՈՐՈՒՄՅՈՒՆ

Ըաղաքային «Կոմայրի» օրաթերթի հավելված

1991 թ. օգոստոս № 39: Գինը՝ 50 կոպ.

Դեկտեմբերյան օրերի խրոնիկա



ՄԻՆԱՑՈՒ ՄԱՏՈՒՍՈՎՍԻ

ՓԱՐԶՈՒՄ

Փարիզում միշտ էլ տոն է ու հանձնել,
Փայլերի մեջ է ամառ թե՛ ձմեռ.
Լայսերի տարափ, ափիչների կանչ,
Տարագների ցույց ու ցուցափեղկեր:
Բայց դաժան մի ազդ կանգնեցնում է
ինձ

Ու ինձ տանում է աշխարհ մի հեռու,
Բոլոր պատերից ու անկյուններից
Մանկան զույգ աչքեր ինձ են հետևում:
Մանկան զույգ աչքեր՝ ինձ ծանոթ
այնքան,

Ասես սարսափից կպել են պատին.
Ու պատի վրա բառեր կան գուժկան՝
«Արմենիա-ՍՍՍ», «Օգնեցե՛ք մարդիկ»:
Ու մի վայրկյանում հողազունը այս
Փոխանում-բուն է դառնում օտա՜խ
տակ.

Ու Սպիտակի փվածները տալ
Փարիզի մայրիկն կտրում են համփաս:
Մինչ փարիզը իր չափ ու չափերով
Չեզում է, զանգում, բավում, հմայում.
Ամեն անկյունից դեռ ինձ է հայտնում
Հայ մանուկը՝ իր օրրի աչքերով...

ՀԱՄԵՐԳ ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

Դեռ ցավի բոցը չի դարձել անթոյ,
Մանր ոչ մի կերպ դեռ չի մահանում
Առաջին անգամ համերգ է այնտեղ
Այնտեղ, ազնայալ Լենինականում:
Ինչպե՛ս այս ցավի ընթացքը թե՛ կել,
Գուրս հանել սիրտը փլատակներից.
Ու Սպիտակում է օգնության եկել,
Օրսագցովան է ժամանել ետքից:

Ջարակների նուրբ լարերը ձգվել,
Ուզում են ցավը դուրս փախել հոգուց.
Երբ ուզում է սզվորին զգվել,
Սզվորից ավել ինձն է մարմնում:
Մենք հեռվից-հեռու ի՞նչ իմանալիս
Որ լուս դանիկի մթնում խորախոր
Մուգի տողերը Ախմատովայի
Այնտեղ կենցեղ գործարյանը մի հար:
Այնտեղ/ ուր մենք էլ՝ խոնարհվում
դողով

Շնչում ենք վիշաբ բաժն շիրմների.
Ուր չի վերջանում ցուցակն անողորմ
Կորած, հաշված մտերմների:
Ուր հույսիսկ չենք ամենազորեղ
Փլվել, ծածկել է հույսը փրկության,
Ուր ամեն ստամու հեղին է բողբի
Այս հեղաշարժը ամենակարճում:
Մակայն այս անեղ աղետների մեջ,
Այս ավերներում կա ինչ-որ ոգի,
Ու վերին ուժով ներշնչում է մեզ
Հուսալ, սպասել ինչ-որ հրաշխի:

Ի՞նչ են դեռ դեմ սահման ու երկիր.
Տարբեր յեզուներ ու տարբեր աշխարհ.
Երբ մարդիկ առանց բուլղր ու անձեղափո
Կարող են հասնել, սատարել իրար:
Կասկածի, ցավի անել պահերին,
Երբ հանձնվում է հոգին, բալկանում,
Բող ձեզ ամենի, ձեզ հավատ թե՛րի
Այս մեծ համերգը Լենինականում:

Բարգմ.՝ ՍԻՎԼԱ ԿԱՊՈՒՏԻՅԱՆԻ

«Գ. Ք.»
8 դեկտեմբերի 1989 թ.

1988. ՊԵՎՏԵՄԲԵՐԻ 7 ԱՐԶԱԿԻՐԻ ՇԵՏԵՐԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ



Կուսակիցներ՝ Ս. ԳՈՒՅԱՆԸ

ԳԱԼԻԱ Է ԾՊԵՆՈՒԹՅՈՒՆԸ

Կամոյի էկեկտաֆիկացման և մեկնայացման ձեռնարկության գիրքի-տոր Վ. Հակոբյանը մեր թղթակցին հայտնեց, որ ձեռնարկության կոլեկտիվի որոշմամբ Սպիտակ է մեկնել 40 մարդուց բաղկացած հարվածային ջոկատ՝ իր հետ ունենալով

եռակցման զանազան պարտաւեր և թրվածի բալոններ: Ազնաի վայր են ուղարկվել նաև ձեռնարկության 2 ավտոկոուսակներ, 9 հզար մեկնաներ, 2 ավտոբուս: Միաժամանակ ձեռնարկությունը երկրաշարժից տուժածների ֆոնդ է մուծել 15000, իսկ կոլեկտիվը՝ 10000 ռուբլի:



ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԶԱՅԿԱՋԻ

Մեզի է 1977 թ., ապրիլի 14-ին: Սովորում էր № 16 դպրոցի 5-րդ դասարանում, Սուրենը հեղ ու լսիկը ընկալողություն ուներ, ծառ ու ծաղիկ հանդիպ չեմ ու մտերմիկ սերը մրազներ ուներ, որ պիտի բողբոջիին, որոնց մասին այդպես էլ ոչ որ չիմացավ: Այդ օրը մի տեսակ անսովոր զույն ուներ երկինքը, շարագուշակ մթազնած էր: Գուցե ինչ-որ բան զգաց Սուրենը, երբ դպրոցը գնալուց՝ առաջ փոքր-ինչ երկմտեց. գնալ, թե չգնալ: Ա... գնաց: Գնաց միանալու իր դասընկերներին, որոնց այնպես սիրում էր, գնաց, որ երանց հետ միասին ընդունի մասը, հարազատներին թողնելով խելազար ցավի մեջ:

ԱՐԹՈՒՐ ԻՍԳԻՐՅԱՆ

Ամեն գեղեցիկ ու բարու հանդեպ պաշտամունք ունենի: Եվ քո մեղս ու անոթիս քրեմադրության սիրելի էիր քո լորի համար: Կրտսեր եղբորդ՝ Կարենի հետ մի փոքր բախվեցիր այն դժմի օրվանից մնալ օր առաջ և շատ ազդվեցիր, երբ մայրդ՝ հանդիմանեց: Խուսաացար, որ նրան այլևս չես տրտնեցնի՝ քո պատանեկան չարամություններով: Ինչքան էիր սիրում քա-

կետրոլ իստղա: Քո հախախրած մարզամուտ փայլում էիր. ստաբուություններ շարունակ միշտ արժանանում մարզչի՝ Հենրիկ Գրիգորյանի զովասանքներին: Երկու օրից միտքեմական մրցաշարի էիր մեկնելու Կաունաս: Անագորույն մաճը Դուկաս Դուկասյանի անվան դպրոցի փառասկաների տակ թաղեց 10-րդ դասարանցուդ վատ երազները...



ՆԱՆԻԶԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ (ծնվ. 1978 թ.)

ՆԱՆԻԶԱՆՅԱՆ ԱՆԱԼԻՏ (ծնվ. 1981 թ.)

Փոյր ու եղբայր № 9 միջնակարգ դպրոցում էին սովորում: Հենց այս դպրոցի անուն են տալիս, երբում եմ այն սրտանմիկ անհաբանները, ազնաի օրերին՝ փլված շենքեր: Միեղգնա որ քան էի սպասել այն օրվան, երբ երեխաներս դրպ

րոց կհանախեն, երբ տուն կրեբեն գնանառականներ ու միասին կուրախանան: Կարե տեղեց բնական հուճով բերացող մեր կյանքը: Կազիկս չորտոդ դասարանցի էր, Ալյանի մշակույթի պարի խմբի սան: Լավ էր սիրում և լցնում մեր սրտերը խիեղով: Անհեխաս առաջին տարին էր դպրոց հախախում, բայց աղոթե՛ն որ չիլ էր ուսուցչուհի դառնալ:

ԱՍՏՎԻԿ ՆԱՆԻԶԱՆՅԱՆ



ԿԱՐԵՆ ՌԱՆԻԿԻ ԱՆՎՐԻԱՍՅԱՆ



ԿԱՆՑՆԵՐ, որ այդ շարալիտ օրը նա այլևս տուն չպիտի վերադառնար... ԼՈՒԻՍԵՆ ՌԱՆԻԿԻ ԱՆՎՐԻԱՍՅԱՆ



ՀԱՄԼԵՏ ՎԱՆՈՒՐԵՎ ԳԱՎԹՅԱՆ

Մեզի է 1978 թ. Լեմինակամում: Սովորում էր Լեմինակամի Ա. Գևորգյանի անվան № 10 դպրոցի 9-րդ դասարանում: Համախում էր շախմատի դպրոց և զգալի հաջողություններ ուներ: Երազում էր շախմատիստ դառնալ: Դպրոցում սովորում էր բարձր առաջադիմությամբ: Սիրում էր ման ֆուտբոլը և միշտ դարպասն էր պաշտպանում: Պատանհին մտահոգված էր Լարարադի ճակատագրով: Ծոյցների օրը մշտապես վազում էր թառեռակամ հրապարակ, իսկ երեկոյան տանը կիսում էր իր սուպերդրոյունները:

Մեզի է 1978 թ. Լեմինակամում: Սովորում էր Ա. Գևորգյանի անվան դպրոցի չորրորդ դասարանում: Բազարակ գերազանցիկ էր, սովորում էր ման № 3 երաժշտական դպրոցի ջութակի բաժնի՝ 3-րդ դասարանում, ցանկանում էր կամ երաժիշտ դառնալ կամ թժշկուհի: Լուսինեն մարդամուտ էր, սիրում էր իր ընկեր - ընկերուհիներին, պարզամիտ էր, շիտակ: Տանը օգնում էր մորը, չէր գանում ոչ աշխատելուց, ոչ սովորելուց: Դեկտեմբերյան այդ դժնդակ օրը եղբոր հետ դպրոց գնացին, մայրը պատուհանից նայում էր նրանց հետևից և ուրախանում սպասումով, թե երբ պիտի վերադառնան և տունը լցնեն խիեղով: Ավստրալուսինեն դպրոցից տուն չվերադարձավ իր մամն հազարավոր երեխաների պես, դաժան արհավիրքը կտրեց նրա մատաղ կյանքի թելը:



Մեզի է 1980 թ., Կումայրիում: Ընդունվել է Ա. Գևորգյանի անվան № 10 միջնակարգ դպրոց: Շատ խելացի էր, հարգիկ: Տարիով մեծ տղաներն էին իր հետ ընկերություն անում: Սիրում էր մարեմատիկան, կարշտությունը, բայց ամենից շատ փայտով ու պլաստիլինով առարկաներ պատրաստել, որը նրա մաս շատ հաջող էր ստացվում: Մեկ շաբաթ № 22 միջնակարգը (որը չփլվեց երկաշարին) հանախելուց հետո, հոր համազմամբ երեց տեղափոխվեց հայտիկի՝ № 10 դպրոցը: Երեխաս միշտ միեղում էր, որ իրեն չուցի: Այդ օրը չէր ուզում դպրոց գնալ, առավ էր՝ «Պայուսակա ծանր է, դպրոց չեմ գնա»: Ինչ իմանալիք, որ երկար տարիներ գոյություն ունեցող դպրոցը փլատակների կվի ըստվեր, իր հետ տանելով դեռ եր կյանք մտնող անմեղ մանուկներին:

ԿԱՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԿԱՄՃ ԼՈՒՐ

ՂԱՓԱՆ (Մեր սեփ. թղթ.): Երկրաշարժի ավերիկ հետեանեները վերացնելու համար Լեմինակամ են ուղարկվել 300 բանվորներ, մեխանիզմներ, 30 բեռնատար ավտոմեքենաներ ու ավտոկոուսակներ, 40

եռակող սարեր: Ուղարկվել է 40 լիարդնոբարկան արշուն, անօրևանմբեացածներին 150 վրան, 40 հազար ռուբլու հազուստեղեն և անհրաժեշտ այլ իրեր: ԵՆՈՐԶՐԴՅԱՆԻ ԶԱՅԱՍՅԱՆ



ՆԱՐԻՆԵ ՌՈՒԴԻԿԻ ՌԱՆՅԱ ՅՆԼՅԱՆԸ (ծնվ. 1968 թ.)

Սովորել ու ավարտել էր Զարենցի անվան № 25 միջնակարգ դպրոցը: Կոկիկ ու մաքրասեր աղջիկ էր, սիրում էր մոր փոխարեն ամեն ինչ ինքը անել, թեթևացնել նրա տեսիլի հոգսը: Մայրը չգիտեր, որ այդ դաժան օրվանից հետո ծանր վիշտը մեկնակ էր տանելու: Նրա կյանքը գարուն էր, որին չհաջողեցին ամառն ու աշունը:

տեղ է դպրոցն ու ընդունվել Լեմինակամի պոլիտեխնիկումը, որը գործախառարար չհասցրեց ավարտելու: Համեստ ու ինքնամոտի աղջիկ էր, սիրում էր կարգալու, հյուսել, համեղ թխվածքներ պատրաստել: Անգործ չէր մնում: Ելուղիքը անընդհատ ձեռքին էին: Գործում էր բուրդի համար, ոչ որի չէր մեղքում: Փլատակների տակ եռույթիսկ գտնվեց շուրջերը ձեռքին:



ԱՐՓԻՆԵ ՌՈՒԴԻԿԻ ՌԱՆՅԱՅՆԼՅԱՆԸ (ծնվել է 1970 թվականին, 1987-ին ավար-

Կիսատ մնաց բուլդիկները համար ամեն ինչ, ծաղկուն կյանքը, որ երբ պիտի բողբոջներ տար:



ԱՐՄԵՆ ՈՍԿԱՆԻ ԱԴԱՄՅԱՆ
Նա մի նոր աստղ էր գառնալու Այո, Արմենը 16 տարեկան էր, բայց հասցրել էր շատ բանի արագացումը: Դեռ դպրոց չէր հաճախել, իսկ դիտոր հայերեն և աստղերի տառերը: Չնայած պատանի, 1,85 մ. հասակ ունենալով, գեղեցիկ ու ատլետիկ կազմվածքով: Ըզրազվում էր սպորտի տասնյակ ձևերով, Աշխատում էր սովորել օտար լեզուներ: Աղետը խլեց բազմազան տղան, որը, եթե կենդանի մնար, անշուշտ իր ծով գիտելիքներով ուրույն տեղ կունենար գիտության, սպորտի, կամ որևէ այլ կարևոր բնագավառում:

ՍԵՂԻՍ ՈՍԿԱՆԻ
ԱԴԱՄՅԱՆԸ ծնվել է 1966 թ. Տասնամյակը ավարտելուց հետո մեկնեց զինվո-



րական ծառայության: Վերադարձվել է նույն տարում ընդունվեց պոլիտեխնիկական ինստիտուտի երկրորդ բաժինը: Միևնույն ժամանակ աշխատում էր Բացառիկ կարողություններով օժտված երիտասարդը, չնայած բնակարանային նեղ պայմաններին, ստեղծել էր լարդարատար աշխատանքային, որտեղ պատրաստում էր էլեկտրոնային սարքեր, ժամացույցներ, հաստոցներ: Իր հասակակիցները ուղղակի ապշում էին Սեղիսի ոսկե ձեռքերով պատրաստվածները տեսնելով, սակայն տղան չէր սիրում իր մասին գովեստի որևէ խոսք լսել: Նա հաճախ էր հաշվում, որ 2000 թվականին լինելու է 34 տարեկան, տարուրբերում էր գլուխը և ասում. «Պետք է շտապել, աշխատել ու աշխատել»:



ՄԱՐԻՆԵ ՎԱՐՈՒՓԱՆԻ
ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել էր լենինականում 1964 թ. օգոստոսի 4-ին և սովորել էր Մ 22 միջնակարգ դպրոցում: Ուսման առաջավոր էր նրան սիրում էին թե ուսուցչական կուլիկները, թե ընկերակիցները: Մարինեն փայլուն գեահատականներով ավարտեց բժշկական ուսումնարանը ու ամուսնացավ: Երբ աճեց երկրաչափը կտրեց նրա կյանքի թելը, նրա ազդեցիկը Հասմիկը արգեն հինգ տարեկան էր:



ԳԱԳԻԿ ԽԱՅԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ ծնվել է 1981 թվականի հունիսի 12-ին, Լենինականում: Սովորում էր Բ. Դարբերյանի անվան Մ 9 միջնակարգ դպրոցում: Խեղացի ու կազմակերպված երեխա էր: Պարտանախարհե կատարում էր դպրոցական բոլոր հանձնարարությունները: Երբ դեկտեմբերի 7-ին դպրոցից առևեկով բարձր էր տրամադրությունը, «Տ», — ասաց ինքնագոհ՝ դասարանային մրցության հաղթող էր Այո, մրցութայինում հաղթեց, սակայն չըկարողացավ խոյս տալ մահից, զոհ գնաց ձախորդ օրվան...



ՄՏԵՓԱՆՅԱՆ ԼԴԻԿ ՎԱՀԱՆԻ

Ծնվել է 1938 թվականին, սովորել և ավարտել է շինարարական տեխնիկումը, ապա՝ Խոջեվ աշխատանքի «Լենին» տրեստում, որպես աշխույժ, հետո «Լենինոշտր» տաղրաստեղծական միավորումում: Նրա կառուցած շենքերը կանգուն մնացին, դիմաշահ երկրաշարժի ծանր հարվածին, ուրեմն և զոհեր չեղան: Էզիկը զոհվեց մեկ ուրիշ շենքում, մեկ ուրիշ շինարարի, հավանաբար անհարկ խեղճ շինարարի ձեռքով կառուցված շենքում:

Ինչ հրաշ է ապրել այսօր գավից հետո, ինչ հուզում է, որ ինձ տանից դուրս է հանում, Ո՛վ եմ հիմա, ես ինչ ասեմ եկող մարդուն, Կեցողի՛՛ն՝ ես ի՞նչ ասեմ: Ինչ դժվար է հոգը գրկել այժմ քաց, Ինչ ծանր է մագախով օժեք ապրել, Ինչ կատարվեց մեզ հետ սեր իմ, տեր իմ ասաված, Ինչ դժվար է դեռ առաջել: Ո՛վ եմ արդյո՞ք, ես ինչ մարդ եմ, ո՞ր եմ գնում, Այս ի՞նչ բախտ է, որ բազել է մեզ մեկուսի, Մե՛նք ընկնում ենք, որպես ճավիթից պոկված փետուր Մե՛նք գնում ենք, դասարկ ու սին: Եվ ինչ սիրտ է, որ կծկվել, չի բացվելու, Զարմանում եմ, սիրտն իմ ապրի, ի՞նչ օրենքով, Ինչ լիզու է, որ իր մարդ չի կանչելու, Իսկույն է լեզուս վերեզ: Ո՞ր է հիմա իմ հիշում հասցեն, իմ նշանին, Այն թի առան, որ իմ երգի տողն է էլի, Ո՞ր է բացվում ծիածանը կապույտ, կարմիր, Արշալույսը իր թևերին: Ինչ հրաշ է, ապրել այսօր գավից հետո, ինչ հուզում է, որ ինձ տանից դուրս է հանում Ո՛վ եմ հիմա, ես ի՞նչ ասեմ եկող մարդուն Կեցողի՛՛ն՝ ես ի՞նչ ասեմ...

ՅՈՐԻԿ ՄԻՆՈՒՄՅԱՆ

ՆՈՐԸՐԴԱՅԻՆ ԿԱՆԱՆՑ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ

Խորհրդային կանանց կոմիտեն հեռագիր է հղել Հայ ժողովրդին՝ նրան հասած զոհաբառության անթիվ: Լեռնազրոյ խոր կարեկցանք և ցավակցություն է հայտնարվում Հայաստանի ժողովրդին տարերային ազատի անթիվ, որին ողորդաբար զոհվել են բազմաթիվ մարդիկ: Բոլոր խորհրդային կանայք կհստում են իրենց հարգատեներին ու մեծազորներին կորցրած բնասերներին ցավն ու վիշտը: Կոմիտեն, ասվում է ուղիբժում, բազմաթիվ հեռագրեր է ստանում երկրի կենտրոնադրոգներից, որոնցում պատրաստակամություն է հայտնվում կիսելու վրա հասած զոհաբառությունը, բարոյական և նյութական օգնություն ցույց տալու եղբայրական ժողովրդին:

(ՏԱՍՍ)



ՌՈՒՋԱՆԱՆ ՎՈՒՈՂՅԱՆԻ ՀԱՎՈՐԱՅԱՆ

Ծնվել է 1959 թ. Անցիականում, սովորել մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնում: Համալի էր թե արտասրինով, թե՛ բնավորությամբ, բարի ու հոգատար բոլորի նկատմամբ: Երկրաչափ փ օրը փոքրիկ ԱՆՆԱՅԻ հետ տանն էր՝ Գորկու փողոցի Ու 54 շենքում: Անհամազուտ օրեր էին, Ռուզաննան



Որից էր մայրամալու և մերթիմ հուզմունքով սպասում էին հաբազատները, թե փոքրիկ Աննան թո՛ղ է ունենալու, թե՛՛ եղբայր: Այս ո՞ր... հավերժ փակվեցին Ռուզաննայի և աղջկա՝ Աննայի աչքերը, չսվեց նոր ծնվող մանկան առատված ճիշտ: ԱՋԳՈՒՑ ՍՐԱՊԻՆ ՀԱՎՈՐԱՅԱՆ: Ջալալին ինչ կարող է գրել իր մոր մասին: Ինչ էլ գրվի, չի կարող լիովին ար-



տահայտել արտի խոսքը: Ծնվել էր 1918 թվականին, ապրել ու աշխատել էր վերված էր իր զավակներին: 1987 թվականին ծանր հիվանդացավ: Ինչպիսի հոգատարու թյանք էին խնամում երեխաները, դողում նրա կյանքի համար: Անցավ վաղը, անցավ ցավը, թվաց, թե ամեն ինչ հարթվեց: Ազգուշ Հակոբյանին փրատակներից հասնեց 11-րդ օրը:



ԱՆԱԿՏ ԳԵՎՈՐԳԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է 1967 թ. օգոստոսի 1-ին, Բողոքամովկայի շրջ. Մեծ Խաչնայի գյուղում: Ավարտել է տեղի միջն. դպրոցը, սցենարիստ: Օժակի կապի ուսումնարանը՝ կարմիր դիպլոմով: Ընդունվել և ավարտել է

Օժակի երկ/գծի և կապի ինստիտուտը: 1987 թ. Անախիտը ամուսնացավ: Կարճ տևեց նրա երջան կույրուցը: Հասցրեց միայն մեկ զավակ ունենալ: Օտտ էր սիրում կյանքը, ծաղիկներ, գարուն և ամեն մի գեղեցիկ ու լավը կյանքում: Դեկտեմբերի 7...Չարաբատիկ աղ օրը Անախիտը ամուսնու և որդու՝ փոքրիկ Էդիկի հետ տանն էր: Ապստվում էին իր կյանքի վերջին վայրկյանները: Նա անտեղյակ մոտեցող մահվանը՝ հետաքսվ կյանքից: Սիրելի քույրիկս, կանխաբազ գալով որ քեզ կկորցնեմ, խեղաբար պես վազում էի դեպի քո բնակարանը, որը փլվել էր Առյժ վայրկյանին: Աճեղ հրեջ քեզ լսելի էր: Խնչա-

կորոցս միշտ էս գտնում էի ու փնտրում, սվալ դու չէիր արձագանքում ինձ: Աղերսում էի ու օգնություն կանչում, աս կայն իզոր... Ավերվել էր քո երթման գեղեցիկ ու ջերմ բնակարանը: Միայն շատ խու ու լսելի էին փոքրիկ Էդիկի լացի ձայնը և ամուսնուց աղերսանքը, փրկեցեք Անախիտիս... Սիրելի քույրիկ, անա արգեն մեծացել է փոքրիկդ, 3 տարին կրթանա շուտով: Նա իր քաղցր լեզվով մամա է ասում ու կանչում քեզ շարունակ: Կանչում է ու չի զբոսնում: Գո փոքրիկ քաղցր դեռ խոսում ծնողի՝ քաղցրություց, կորցրել է քեզ ու ոչ մեկու էլ չեմ կարող քո բազակարության հետ հաշտվել: ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՆԱՐՄԱԿ ԲԵՅԻՒՆՅԱՆԻ ՄԱՍԿԻՑԱՆ

Նարինե (Նատան) մեկ տարի առաջ էր ավարտել № 14 դպրոցը: Դեկտեմբերի 7-ին հոր հետ գրոցում էին, թե ինչպես եղավ, որ դուրս մնաց բռնի ընդունելության քննություններից: Հայրը, որ հրաշքով է կենդանի մնացել, պատմում է, որ այդ օրը նա հուսադրում էր աղջկան՝ ասելով, որ հարկ չկա վտանգում, չէ՛ որ ընդամենը 17 տարեկան է և հաջորդ տարից ազգայնաց կրթությունը իր նախընտրած ֆակուլտետը: Զրույցը կցկտոր էր, ինչ-որ չէր քս տալիս: Լավ կինոկար էին ցուցադրում հեռուստացույցով, բայց ոչ կարողանում էին կենտրոնանալ, ոչ էլ գրույցն սովորել: Այդ պահին աղետը ընդհատեց ամեն ինչ...



ԳՅԻԱԶԱՐ ԱՍԿԻՐԱՆԻՅԻ ԳՈՂՈՍՅԱՆ

Մայր իմ անուշ ու անգին, միշտ աղեկոծ է իմ սիրտը, աչքերս էլ արցունքով են լի: Այդ տարին, դեկտեմբերի 29-ին քո 50 ամյակն էինք տոնելու: Մի րեկիս, ամբողջ օրս լավ օրեր ենք պետք է ապրեինք: 38 տարեկան հասակում կորցրեցիր ամուսնուդ, և երեք երեխաներիդ մեծացնելու և զատարարակերտ դժվարին հոգսը մնաց քո ուսերին: 30 տարի անընդմեջ աշխատեցիր կարի № 2 արտադրական միասնությունում, տրեցիր մինչև կյանքիդ վերջին վայրկյանները: Բանի-քանի երազներ մը-նացին թերի: Զինացրեցիր դուռերդ ու երկու որդիներիդ հասցնել իրենց նպատակին:



ԵԳՆԱՐՔ ՍԵՐՐԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ծնվել էր 1941 թվականի Մարտի 8-ին, Լեհիստանում: Հնդամենը 47 տարեկան էր, երբ վրա հասավ անաստված երկրաշարժը: 20 տարուց ավելի աշխատում էր կարի № 2 արտադրական միավորումում որպես կարող քանվորուհի: Իր անվանը հակատակ, Զվարթը տատապանքներով լեցուն կյանք էր ունեցել: 35 տարեկան հասակում սերիացել էր, երեք երեխաների խնամքի ծանր բեռը մեծակ կրելով: Իր համեստ աշխատավարձով պահել, մեծացրել ու ամուսնացրել էր երեխաներից երկուսին, պատրաստվում էր ամուսնանալ ումեր: Գնալ վատապան հանգստի ու շրջապատվել թոռներով ու հարսներով: Աղետը նրա այս իղը անկատար թողեց...



ՈՂՅԱ ՄԻՍՅԱԿԻ ՄՈՎՍԻՑԱՆ

Ծնվել է 1933 թ.: Աշխատում էր Չկպոլի անվան կարի ֆաբրիկայում որպես բանվորուհի: 48 տարեկան էր, երբ կորցրեց ամուսնուն: Հինգ երեխաները որը մնացին: Սա կայն Ռոզա մայրիկը ազնվեստ արեց, որ որոտյան զգացու մը երեխաները որքան հնարավոր է քիչ զգային: Իր համեստ աշխատավարձով կարողացավ խնամել ու մեծացնել երեխաներին: Համեստ ու ինքնամոտի էր Ռոզան, ուրիշի վշտով ապրող, դիմացինի դերույթան մեջ մտնող: Եվ եթե իր օգնության կարիքը ուներ որևէ մեկը, չէր զլանում: Հիսունինգ տարին քորում Ռոզա մայրիկը, իր սիրելի գործընկերների, աշխատակիցների հետ մնաց Գեղեցիկի 9 հարկանի շենքերից մեկի փլատակների տակ:



ՈՂՅԱՆ ԱՐԱՄՅԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ծնվել էր 1955 թվականին, Լեհիստանում: 1962-72 թ.թ. սովորեց և ավարտեց № 9 միջնակարգ դպրոցը: Մինչև ծառայությունը, աշխատանքային կենսագրությունը սկսեց «Լեհիստան»: Զորացրվելուց հետո շարունակեց իր աշխատանքը հին աշխատավայրում, որպես քարտրահարկ շենքերի կոնկրետար: Աղետի պահին Ռոբերտը գտնվում էր կոնկրետի խցիկում: Նա չհասցրեց անգամ զգալ, թե ինչ է կատարվում: Ամեղ ցնցումները կոտորեց շուտ եկավ ու... երիտասարդ կոնկրետարն էլ իր հագարավոր հայրենակիցների մեծ ժամանակից շուտ աստատան գտավ մայր հողում: Մեծանում են նրա երկու դուստրերը հոր կորուստը սքր տերում:



ԻՐԱՆ ԱՐԱՄՅԱՆԻ ԱՅՎԱԶՅԱՆ

Ծնվել էր 1928 թվականին, Լեհիստանում: Մեծացրեց իր երեխաներին, ամուսնացրեց, տեսավ նրանց երջանկությունը: Դրանից ավելի ի՞նչ էր պետք մոր համար: Տնային տնտեսուհի էր և իր ամբողջ ժամանակը հատկացնում էր սիրալեն թոռնիկներին: Գարգ ու շիտակ բնավորության տեր կին էր, սիրված ճանաչողների կողմից: Լավ էր, որ չիմացավ իր որդու՝ Հայկի, թոռների՝ Խաչի կի՛ն և Մարյեցի, Լիզայի ու Էստրայի կորստյան բոլորը: Նրա մայրական բյուրեղյա սիրտը դժվար թե տաներ այդ վիշտը...

ԽԱՉԻԿ ԼԻԶՈՒՐԻՆԻ ԱՅՎԱԶՅԱՆ

Ծնվել էր 1979 թվականին, Լեհիստանում: Սովորում էր № 23 միջնակարգ դպրոցում: Ուշիմ, խելացի աշակերտ էր: Ո՛վ կարող էր մտածել, որ ցայտակարգ գնդեցիկ արտաքինում, այդքան քիչ կյանք տեսած այդ փոքրիկը կարող էր այդպես հանկարծակի հեռանալ կյանքից: Ավաղ, 9-ամյա խԱՉԻԿԸ զոհ գնաց շարագույն աղետին, մնաց Ժիրակացու № 47 շենքի փլատակների տակ:



ԵԳՆԱՐՔ ՄԻՍԻՑԻ ԱՅՎԱԶՅԱՆ

Ծնվել էր 1959 թվականին, Լեհիստանում: Սովորեց և ավարտեց № 4 միջնակարգ դպրոցը: Մանկությունից սիրեց սպորտը: Զբաղվում էր հրամազությամբ, համաբազանությամբ այդ մարզանքի լավագույն ներկայացուցիչներից էր: Կրում էր սպորտի վարպետի պատվավոր կոչումը: Հայկի ամենամեծ ուրախությունը նրա զավակներն էին՝ ՄԱՐԿԵՆԸ (ծնված 1984 թվականին) և ՄՐԻՆԸ (ծնված 1986 թվականին): Աղետի պահին նա փորձել էր թե վերով ծածկել իր սիրալեն բախիկներին, ինչպես բազմե կծածկեր իր ձագերին զորեղ թևերով: Մակալն աղետը փոքրիկներին էլ չիմայեց:



ԵԳՆԱՐՔ ՄԻՍԻՑԻ ԱՅՎԱԶՅԱՆ

Դժվար է պատկերացնել անգամ, որ յուսամկարից նա յոդ այս ծառայողն երիտասարդն ու երկու յուսալի փոքրիկները ընդամենը հուշ են մեր կյանքում:



ԵԳՆԱՐՔ ՄԻՍԻՑԻ ԱՅՎԱԶՅԱՆ



ԵԳՆԱՐՔ ՄԻՍԻՑԻ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀԱՅԱՐ ՈՂՈՐՄԻ...

Հազար ողորմի անմեղ զոհերին, Ապրողներին՝ տախտակային ու կամփ, վշտի, կարստյան այս ախար ժամին Պաղարծրություն հայ ազգին ցանկանի: Հազար ողորմի ձեզ, անեղծ կույսեր, Դուք մահաբաժնուր, դալար, յուսեղեն, Զեք աշխարհում, որ առև ու յույս էր, Իշավ խավար՝ արեռ, Բաբեղեն: Հազար ողորմի հեզ սիրահարին Ավերակներում նահատակ դարձավ, Եվ սեր և հույսեր գերեզմանվեցին, Գնաց աշխարհից պապակ ու ծառայ: Հազար ողորմի և խեղանդամված Ու արյունախառն յույս մանուկներին, Կյանքի գարունին բնկան հոշոտված Եվ զոհ գնացին փլատակներին: Եվ ողորմա, տեր, երանց բայորին Ով էր չունեցան անգամ գերեզման, Արցունքներ շրեկան երանց դիերին՝ Ինչպե՞ս խլացնեն իմ խոսքը ցամաք: — Եզովվեա հավերժ, դու վայ շինարար, Եվ տա բող աստված, որ ապրես երկար, Քանզի ապրելը Բեզ համար հիմա, Մանից առավել պատիծ պիտ դառնա: ...Հազար ողորմի անմեղ զոհերին, Ապրողներին տախտակային ու կամփ, Մեր համագգային այս վշտի պահին Հարատևություն այս ազգին ցանկանի: 1988 թ. դեկտեմբեր

ՎԱՐՈՋԳԻԱՏ ՆԻՈՒՑԱՆ

ԳՅՈՒՄՐՈՆ

Ես իմ Գյումրին աշխարհի հետ չեմ փոխի, Նրա փուշը ինձ ողկույց է խաղողի, Որ էլ գնամ կարտիցը կմարեմ, Նրա շենից ոտքս այլ չեմ կոխի... Իմ գոյ Գյումրին ուրախության ծորան էր, Արևեստների-արվեստների օրրան էր, Հայաստանի թե-թիկունքն էր զորավոր, Ամեն հայի յույս ու հույսի խորան էր: Բայց, ախ, էսօր իմ դրախտը էլ չկա, Մարիկ, ել տես, գմրուխտ թախտը մեր չկա, Աղետը չար ափիքեց, մոխրեց մեր այգին, Մեր տանջանար խալիի քախտը էլ չկա: Ել, ոտքի ել, Գյումրի, Անի մի լինի, Օտտ ենք լացել, ամեղ շիրիմներին գինի, Բավական է, արի ծպտանք մենք նորից, Որ դրախտվես նոր հրաշքով ու հին: Այդ, դժոխքը դրախտի հետ չեմ փոխի, Փռուչ կուտեմ, պետք չէ ողկույզն խաղողի, Թո անցյալի կարտիցը մարում եմ, Ես քո շենից այլ տեղ ոտքս չեմ կոխի...

ՀՐԱՆՑ ՄԱՐԿՍՅԱՆ



ԱՐՏՈՒՇ (ԱՎԵՏԻՔ) ԿԱՐԱՊԵՏԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել էր 1958 թ., Լենինգրադում: Զուրկ լինելով հայրական հոգատարությունից, ծնողազուրկ թողնեց նաև իր երեք տակավին մահուկ երեխաներին: Չտեսնելով հագրական գուրգուրանք, ինքը զգալով դրա կարիքը, նա ամեն գնով աշխատում էր, որպեսզի իր երեխաները տեսնեն և զգային այդ քաղցրությունը, բայց, դառը ճակատագիրը դարձյալ չկրճատեց, երես թեքեց նաև նրանից, նպատակները թողնելով անկատար: Նա հայր էր, ամուսին և որդի՝ բառի ամենախոր իմաստով: Իր ընտա-

նիքին և երեխաներին նվիրված էր վեճ զգացումներով և այդ զգացումներն էլ պատճառ դարձան կրակից նրա հետանալուն, այլապես նա հիմա ողջ կլիներ և կապերը իր հարազատների ու բաղիկների հետ:

«Երկրաշարժ է»,—գրուած նա և իր 1 տարեկան որդուն սեղ մեղով կրծքին, դուրս վազեց ընդամենը 2 հարկանի շենքից, հետևում թողնելով իր երկու տարեկան երկվորյակ աղջիկներին, կնոջը և մորը: Նա արդեն շենքից ելել և ապաստում էր իր ընտանիքի դուրս գալուն, սակայն անողորմ տարերքի երկրորդ հարկանից անքողջ շենքից կարծես առանձնացավ և փրկվեց հենց իր քնակարանը: Արտուշը կյանքը վտանգի են թարկելով, նորից վազեց կնոջը, երեխաներին, մորը փեր կելու ակնկալիքով, սակայն չհասավ նրանց: Դաման մի քարի հարվածով նա հավերժ հետացավ իր նվիրական ընտանիքից, կրծքի տակ իր միամյա որդուն փրկելով: Փրկվեց որդին՝ փոքրիկ Կարենը, որպեսզի վառ պահի իր հոր հիշատակը, որն իր կյանքը չիմացեց իր ընտանիքի փրկության համար:



ՀԻՆԳԸ ՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ Ց

ԴԱՎԹՅԱՆ ՅՈՂԻԿ ԱՄԱՄՈՆԻ ԾՆՎ. 1930 թ. ԴԱՎԹՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԾՆՎ. 1950 թ. ԴԱՎԹՅԱՆ ԴՈՐԱ ԾՆՎ. 1980 թ. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՅԱՆԵ ԱՐԹՈՒՐԻ ԾՆՎ. 1983 թ. ԴԱՎԹՅԱՆ ԷՂԳԱՐ ԱՐԹՈՒՐԻ ԾՆՎ. 1988 թ.

Նորարարորդ մի ընտանիք էր՝ իր երազանքներով ու հույսերով: Նոր էին տեղափոխվել հույվարային թաղամասի շենքերից մեկը: Չարաղես երկրաշարժից երեք օր առաջ ուրախ խնջույք էր այդ տանը, Արթուրը քանկացել էր, որ



պայտասկը ձևորին: Այժմ նա իր տատիկի եղբոր՝ Ռազմիկի խնամքի ներքո է: Այս քարի անձնավորությունը ոչ մի ջանք չի խնայում փոքրիկին ապահովելու և երջանիկ մեծացնելու համար:



Խուսանկարը՝ Ս. ԳՈՒԼՅԱՆԻ

ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ ԴՃԻՒՍՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՉԵՆՔ ԹՈՂՆԻ

ՏԱԾՔԵՆԴ, 8 դեկտեմբերի. (ՏԱՄՍ-ի թղթակից Ի. Խիսամով): Ուզբեկստանի աշխատավորները խոր ցավով ընդունեցին Հաջատանում տեղի ունեցած երկրաշարժի լուրը: Հանրապետության Կարմիր մահիկի ընկերությունը միջոցներ է համազանգակում տուժած եղբայրներին օգնելու համար: Դրա համար Տաշքենդում հաշվարկային հատուկ հաշիվ է բացված: Այսօր առավոտյան ընկերության անունից Հաջատան ուղարկվեց առաջին դրամական փոխանցումը՝ 12 հազար ոտրլի:

— Ուզբեկստանի բնակիչների համար, որոնք վերապրել են Տաշքենդում, Գազլիում և Զերգանայի հովտում տեղի ունեցած ողորդական երկրաշարժերը, առանձնապես մտոիկ ու հասկանալի է հայ եղբայրների վիշտը,—ասում է հանրապետության Կարմիր մահիկի ընկերության կենտրոնի նախագահ Ռ. Վահիդովան:— Մենք հիշում ենք այն անշահախնդիր օգնությունը, որ դժվարին օրերին մեզ ցույց տվեց ամբողջ երկիրը: Այսօր մենք ընդունեցինք դիմում, որով կոչ արեցինք ներգրավել հասարակայնության բոլոր ուժերը և անհրաժեշտ օգնություն ցույց տալ երկրաշարժից տուժածներին, նրանց տալ օրենք, ապահովել հագուստով, սննդով և դեղորայքով: Ամենևին չէի կասկածում, որ այդ կողմ համաժողովրդական պաշտպանություն կգտնի:



ՏԱԹԵՎԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Նրա մասին տպագրվել է «Հիշողության» № 34-ում:

ՈՒՂՈՒՄ

«Հիշողություն» հավելվածի № 85-ում, 8-րդ էջում «Ժաշատոր Ժորժիկի Վարդանյան» նյութում տեղ են գտել սխալ տեղեկություններ: Պետք է լինի. «Դեկտեմբերի 10-ին Շիրակացի փողոցի բարձ-

րահարկ շենքերից մեկում, քերոջ ընտանիքը փրկելու աշխատանքներին մասնակցելու ժամանակ կոմակավարի անփութության պատճառով զոհվեց Ժորժիկ Վարդանյանը: